


Հրաբուզի Բեն

ՊԵՏՈՒԽՅԱՆ ԳԱԼՈՒ



ԱՌՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ

КНИГА ДОЛЖНА ВЫТЬ  
ВОЗВРАШЕНА НЕ ПОЗДНЕЕ

А

891-99

10996

F-52

Фби. Фицрэйн.

Рукопись Фицрэйн.

9n.

891.99  
Բ - 59

ԳԱՐԵԳԻՆ ԲԵՍ

✓

ԹԱՅԻՆԱԿ է 1951 թ.

## ՊԵՏՈՒՆՑ ԳԱԼՈՆ

Հ 5244  
Ձ 996  
Ճ 996  
Մ 996



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1947

Գարեգին ԲԵС  
ՊԵՏՈՒՆԾ ԳԱԼՕ

ГАРЕГИН БЕС  
ПЕТУНЦ ГАЛО  
(на армянском языке)  
Издательство „Советский  
писатель“ Армении, Ереван, 1947 г.

1.

Դուռը բացվեց և շեմքում երկաց հիսունին  
մոտ, բարձրահասակ, զինվորական հին գըլ-  
խարկով ու շինելով մի մարդ:

— Խնդրեմ, — անծանոթին ներս հրավիրեց  
շրջկոմի քարտուղարը:

Անցնելով շեմքը, մարդը ձախ ձեռքով  
ծածկեց դուռը և շարժվեց առաջ:

Մի վայրկյան դիտելով շուրջը, նա ընտ-  
րեց հարմար տիոռ և նստեց ուղիղ շրջա-  
նային կոմիտեի քարտուղարի պիմաց:

Աչ ուսից կախված շինելի դատարկ թիվ  
ծայրը ծնկանը դնելով, նա մի սլահ լուռ  
նոյնեց քարտուղարին, ապա.

— Ես Գալոն եմ, Պետունց Գալոն, — խո-  
սից նա:

— Խսում եմ, ընկեր Գալո, — դիմեց քարտուղարը:

— Ես վարդաշենցի եմ, վարդաշենցի Պետունց Գալոն, — կրկին ասաց առանձնասեհյակ մտնող մարդը:

— Խսում եմ, ի՞նչով կարող եմ օգտակար լինել ձեզ, — դարձյալ դիմեց քարտուղարը:

Պետունց Գալոն անհանգիստ մի շարժում արեց, իրեն ուղղեց աթոռի վրա, ասես Հենց պետք է ընկներ այնտեղից, և հայացքը հանեց շրջանային կոմիտեի քարտուղարին:

Միթե՝ իր անունը ոշինչ չասաց այդ մարդուն, միթե՝ նա առաջին անգամն էր լսում այդ անունը:

Շրջկոմի քարտուղարը հանգիստ դիտում էր դիմացը նստած մարդու անհանգիստ շարժումները:

Պետունց Գալոն հազար և ունվորական հին, արդին վավուց խունացած շինելի աջ ծոցագրականից հանեց մի քանի անգամ ծալված շրջանային թերթի մի համար, բացեց ոչն, փռեց քարտուղարի սեղանին ու ձեռքը

դրեց այնտեղ տպված հոգվածներից մեկի  
վրա:

— Էս գործով եմ եկել, — շոր ասաց նա:

Շրջկոմի քարտուղարը ուշադրությամբ նա-  
ցեց թերթը:

— Ես այս հոգվածին ծանոթ եմ:

— Գիտեմ որ ծանոթ եք, — նկատեց Պե-  
տունց Գալոն, — բայց ինչո՞ւ են տպել:

— Գործարանը վատ է աշխատում և թեր-  
թը վեր է հանել նրա աշխատանքներում  
եղած թերությունները, — բացառեց շրջկոմի  
քարտուղարը, — Թերթի պարտականությունն  
էլ հենց այն է, որ հոգվածի վատ աշխա-  
տողներին:

— Էդ էլ գիտեմ, ընկեր քարտուղար, —  
ընդհատեց նրան Պետունց Գալոն, — Էդ էլ  
գիտեմ. ես մենակ եմ եմ ուղում հարցնել,  
թե ինչո՞ւ պետք ա գործարանը վատ աշխա-  
տի, են էլ հիմա՝ պատերազմի էս օրերին:

Պետունց Գալոն մի պահ լոեց և հայացքը  
հառեց շրջկոմի քարտուղարին:

— Հիմա դուք կհարցնեք, թէ ո՞վ եմ ես,  
ի՞նչ կատ ունեմ քիմիական գործարանի

Հետ,—վոքը ինչ հետո շարունակեց նա ի՞ր  
խոսքը,—ոչ մի կապ: Եղ գործարանի հետ  
ես ոչ մի կապ շունեմ: Ես չեմ աշխատում  
էնտել ու չեմ էլ աշխատել: Մեկի շղիտեմ էլ,  
թե ի՞նչ են արտադրում հիմա նրանք: Մե-  
նակ էն գիտեմ, որ պատերազմի ժամանակ  
ամեն ինչ ֆրոնտի համար առ լինում. ուրեմն  
պարզ ա, թե ի՞նչ ա անում քիմիական գոր-  
ծարանը: Հիմի ես հենց դրա համար եմ  
եկել ձեզ մոտ, որ իմանամ, թե ինչո՞ւ ա  
վատ աշխատում գործարանը, ո՞վ ա եղ  
իրավունքը տվել նրան: Բա էղպե՞ս ա օդ-  
նում նա ֆրոնտին:

Շրջանային կոմիտեի քարտուղարը ան-  
թարթ հայացքով նայեց դիմացը նստած  
մարդուն և ասես կոտհեց նրան իր մոտ բե-  
րող դրդապատճառները:

— Մենք քննել ենք այդ հարցը և միշոց-  
ներ ձեռք տոել, ընկեր Գալո, — ասաց նա, —  
շուտով, շատ շուտով քիմիական գործարա-  
նի մասին միայն լավը կկարդաք թերթում:

— Ես էլ հենց էղ էի ուղում, — վրա բե-  
րեց Գալոն և ոտքի կանգնեց, — էղ էի ու...

ղում, թե չէ ի՞նչ գործ ունեի շրջկոմում։ Ի՞ն, ավել-պակասի համար կներեք։ Թերթը կար-դացի ու շհամբերեցի. ասացի մի դնամ քար-տուղարի հետ խոսեմ։

Շրջանային կոմիտեի քարտուղարը Պե-տունց Գալոյին մինչև իր առանձնասենյակի դուռը ուղեկցեց։

Բաժանվելիս նա ամուր սեղմեց վարդա-շենցու ձեռքը։

— Շուտով ես ձեր գյուղում կլինեմ, այն-տեղ էլ գործ ունենք անելու. կհանդի-պենք, — ասաց նա։

Պետունց Գալոն հանգիստ սրտով թողեց շրջանային կոմիտեի շենքը։

Փողոցում իր մի քանի ծանոթներին բա-րեկուց հետո, նա քայլերն ուղղեց դեպի շրջանային դինվորական կոմիսարիատ։

— Բարեւ, Գալո, — հին ծանոթի պես դի-մավորեց նրան դինվորական կոմիսարը։ — Նստիր։ Ի՞նչ կա։

— Ոչինչ, շնորհակալ եմ։ Մեր էն երկու գյուղացիների թոշակի գործը կարգավոր-վեց. հիմա ստանում են։

— Այ, այդ լավ եղավ, — նկատեց զինվորական կոմիսարը: — Իսկ զո՞ւ, ու ի՞նչպես ես տպառամ: Արամից նամակ ստանո՞ւմ ես: Ի՞նչի կարիք ես զգում:

— Ոչ մի բանի կարիք էլ չեմ զգում, շնորհակալ եմ, ընկեր զինվոր, — ասաց Պետունց Գալոն, — Արամից էլ, ու ամսից ավել ա, որ նամակ չունեմ: Ասում եմ՝ զինվոր մարդ ա, կովով ա զբաղված, հալքաթ մի օր կպրի. բա հո իր հորը առանց նամակի չի թողնելու: Մենակ ա'յ, ընկեր զինվոր, հարեանս, Սաթո անունով մի կին՝ չորս ամիս ինչ մարդոց լուր չունի: Երկու երեխուտեր ա, ինքն էլ մեն-մենակ: Նրա բանը ավելի վատ ա: Ասլրելու մասին խոսք շետքովուամ աշխատում առ լավ տպառամ: Մարդոց որ տեղեկություն չկա, ա'յ, էդ անրան նեղում: Հիմի ես մարդու հասցեն բերել եմ, որ դու մի նամակ գրես նրա հրամանատարին: Մենք դրեցինք՝ անպատճան մնաց: Քոնն ուրիշ ա:

Եվ Պետունց Գալոն գրանից հանեց մի թուղթ ու մեկնեց զինվորական կոմիսարին:

- Շատ լավ, Գալո, ևս հենց այսօր կը-  
պրեմ այդ նամակը:
- Այ, ուստի համար էլի շնորհակալու-  
թյուն:
- Իսկ զյուղում ինչո՞ւ են գործերը վատ  
դնում, —քիչ հետո դարձավ նրան ոխնվորա-  
կան կոմիսարը:
- Ի՞նչ գործես:
- Գարնանացանի նախապատրաստման,  
—ասաց կոմիսարը:
- Էդ ուրեմն դո՞ւ էլ դիտես, ընկեր զին-  
կոմ, —զարմացավ Գալոն:
- Այդ մասին հիմա բոլորը գիտեն, —  
խոսեց զինկոմը, — անցյալ օրը Սեթոյին  
զբա համար հենց շրջկոմի բյուրոյում մի  
լավ ձգեցին: Մի՞թե նա ձեզ էդ մասին շի-  
պամբել:
- Սեթո՞ն... Չէ, չի պատմել:
- Պետունց Գալոն նոր միայն հասկացավ,  
թե ինչու շրջկոմի քարտուղարն ասաց, որ  
այս քանի օրս իրենց զյուղն է գալու և թե  
ի՞նչ գործ կարող էր ունենալ նա այնտեղ:  
Նա դիտեր, որ իրենց զյուղը վատ է նա-

խալպարաստվում գարնանացանին, այդ  
մասին նա շատ էր խոսել կոլտնտեսության  
նախադահ Սեթոյի հետ։ Բայց նա երբեք չէր  
կարծի, որ այդ հարցը շրջանալին կոմիտե  
կհասնի։

Ամոթ քեզ, Սեթո, դու խայտառակեցիր  
Պետունց Գալոյին։ Նա քիմիական գործա-  
րանի վատ աշխատանքի համար շրջկոմի  
քարտուղարի մոտ է գալիս. այնինչ հենց  
մի քանի օր առաջ շրջկոմում քննում են  
իրենց դյուլի, իրենց կոլտնտեսության  
հարցը։

— Սեթոն ոչինչ չի պատմել, — մտաղբաղ  
ասոց Գալոն և ոտքի կանգնեց։ — Բայց էղ  
լավ աղել. շրջկոմը որ քննել ամեր հար-  
ցը, ասել ա թե գործը կսկսի լավ գնալ։

Հետո Պետունց Գալոն հրաժեշտ տվեց  
զինվորական կոմիսարին և թողեց նրա տ-  
ուանձնասենյակը։

## 2.

Դյուլից շրջկենտրոն եկողները միշտ էլ  
դժգոհել են, թե շատ դժվար է այդքան եր-  
աշ

կար ճանապարհը ոտքով կտրելլ, հոգնեցուցիչ ու ճանձրալի՝ մանավանդ երբ մենակ ես, երբ շկա մեկը, որ խոսես, զրուցես հետը և երկար, տեղ-տեղ անհարթ, ձորերի միջով անցնող ճանապարհը աննկատ թվաքեզ, քիչ հոգնեցուցիչ ու ճանձրալի:

Պետունց Գալոն այդ բանը չի կարող առել:

Գուցի պատճառն այն է, որ նա երբեք հանդիսաւ չի անցել այս ճանապարհը և քայլելիս երբեք չի նկատել նրա խորդութուրը, չի զգացել, որ նա երկար է, չափից դուրս երկար ճանապարհ:

Պետունց Գալոն հիմա այդպիսի դեսք չի հիշում:

Իր ամբողջ կյանքում շրջանային կենտրոնում նա միայն մի քանի անգամ է եղել. զյուղացի մարդ է, գործերն այնպես էին դասավորվել, որ տնից հաճախ հեռանալու կարիքը չի զգացվել:

Բայց ամեն անգամ, երբ նա ստիպված էր լինում թողնել զյուղը և գալ շրջանային կենտրոն, միշտ ուրախությունը, կամ ան-

ոլտոմելի վիշտն էր պատճառ լինում, իսկ  
երբ վիշտ կամ ուրախություն ունես, երբ  
հուզված է սիրուդ ու փոթորկված հոգիկ՝  
ոչ ճանապարհի երկարությունն ես զգում, ոչ  
էլ հոգնածություն։ Քայլում ես դու, անդա-  
ղար քայլում և ինքդ միայն քո վշտի հետ  
ես, քո ուրախության հետ ու շուրջդ ոչ քար  
ես տեսնում, ոչ ճանապարհի խորդութուր,  
ոչ դաշտերում փուլած ծաղիկները, ոչ այգի-  
ներում մրգերով ծանրաբեռնված ծառերը։  
Դու չես լսում ձորերում կարկաչող զետերի  
ձայնը։

Եվ Պետունց Գալոն միշտ փոթորկված  
սրտով է անցել գյուղից շրջանալին կենտ-  
րոն տանող ճանապարհը, որը ուրիշներին  
միշտ այդպես երկար, հոգնեցուցիչ ու ձանձ-  
րալի էր թվում։

Ծնողները համոզում էին Գալոյին, որ նա  
ամուսնանա, բայց տղան չէր համաձայնում  
նրանց հետ։ Երեքով հազիվ են կարողանում  
օրվա սև հացը ձեռք բերել. Հիմա ինչ ա-  
մուսնանալու ժամանակ է. ամուսնացով  
մարդը կնոջը չպետք է սովոր պահի։

Գալոն սիրուած էր մեկին, մի զեղեցիկ, մի  
լավ աղջկա, բայց երբեք, երբեք նաև շեր ա-  
մուսնանա այդ լավ աղջկա հետ. շեր ուզի  
միշտ տեսնել նրա շարչարանքները:

Ծնողները մահացան ու Գալոն մնաց մե-  
նակ:

Երբ օրեր ու շաբաթներ անցան, նա լրջո-  
րեն մտածեց իր տունը կին բերելու մասին:

Առաջարկություն արեց աղջկա ծնողներին.  
մերժեցին:

— Գալո ջան, — ասաց աղջկա հայրը, —  
քո գլուխոց հազիվ ես պահում, բա մեղք չի  
մեր աղջիկը: Ի՞նչ ունես դու, ախաղեր, որ ու-  
զում ես ամուսնանալ:

— Այ, էս երկու ձեռքերը, — և Գալոն դե-  
պի առաջ պարզեց իր ուժեղ բազուկները:

— Զէ՛, Գալո ջան, — նկատեց աղջկա հայ-  
րը, — ձեռքի աշխատանքով կին, ընտանիք  
պահել չի լինի:

Կոտրված սրտով Գալոն հեռացավ սիրած  
աղջկա տնից:

Տարիներ առաջ էր այդ, շատ տարիներ  
առաջ:

Հենց նույն օրը Գալոն որոշեց էլ շմառ  
գյուղում, թողնել տուն, տեղ, թողնել ամեն  
ինչ ու հեռանալ այդտեղից, գնալ, թեկուզ  
այժմյան շրջանային կենտրոնը, որ այն ժա-  
մանակ միայն մի քիչ մեծ գյուղ էր և աշքի  
էր ընկնում իր հատ ու կենտ խանութներով,  
փոքրիկ արհեստանոցներով:

Եվ վիշտը սրտում, իր կյանքում առաջին  
տնգամ նա բռնեց դեպի անծանոթ հեռունե-  
րը տանող ճանապարհը: Ոչինչ նա չկաց,  
ոչ ճանապարհի երկարությունը, ոչ հոգնա-  
ծություն: Գուցե և հոգնած էր, բայց տիսրու-  
թյունը ծանր նստել էր նրա հոգուն և նա  
գլուխը կախ անցավ այդ երկար ճանապար-  
հը:

Շատ օրեր հետո, համագյուղացիներից  
մեկը հանդիպելով նրան այդ հեռավոր վայ-  
րում, հայտնել էր, թե Փասնանց Ավագը (իր  
սիրած աղջկա հայրը) խնդրել է նրան ան-  
միջապես վերադառնալ գյուղ՝ կարևոր խոսք  
ունի նրան ասելու:

Պետունց Գալոն հուզվել էր, երջանկության  
ստվեր էր երեացել նրա սրտում և նա նորից

բոնել էր ուրիշներին միշտ երկար թվացող  
դեպի գյուղ տանող ճանապարհը:

Արդյո՞ք ամպերի, թե հողի վրայով էր  
բայլել նա:

Գյուղ ճասնելուն պես նա գնացել էր Փաս-  
նանց Ավագի մոտ:

— Նստիր,— դիմել էր նրան աղջկա հայ-  
րը, իր կողքին տեղ ցույց տալով նրան:

Գալոն նստել էր թախտին:

Փասնանց Ավագը երկար ու լուռ նայել էր  
այդ գեղեցիկ ու հաղթանդամ երիտասարդին:

— Ախպեր,— խոսել էր նա,— վերցրու  
աղջկանս, նա քեզ էլ, քո ձեռքերին էլ հա-  
լուլ: Շատ ուզեցի նրան ուրիշի հետ պսա-  
կել, ասացի հարուստ մարդու տամ, որ մենք  
էլ մի քիչ լավ ապրենք, բայց աղջիկը քեզ ա-  
սիրում: Թող էղուե՛ս էլ լինի:

Ու Գալոն ամուսնացել էր իր սիրած աղջ-  
կա հետ:

Ինչքան երջանիկ էր ամուսնական այդ  
կյանքի արշալույսը, ինչքան վառ ու սլայ-  
ծառ:

Շուտով Գալոն հայր էլ դառավ ու ավելի

ուժեղացավ նրանց ելոդիկից բարձրացող  
ծուխը:

Ախ, հայրենի տան ծուխ, ինչքան սիրելի  
ու թանկագին ես դու:

Բայց սկսվեց առաջին համաշխարհային  
պատերազմը և Գալույին բանակ կանչեցին:

Շատերի հետ նա էլ թողեց տունը, եին,  
երեխա և դեպի այժմյան շրջանային կենտ-  
րոնը տանող ճանապարհը բռնեց:

Բանակից Գալույին շտա շուտով ուղար-  
կեցին ուղմաճակտո, որտեղ կույի հենց  
առաջին ամսում նա զրկվեց իր աջ ձեռքից:

Հետո Գալույին դերի վերցրին ու տարի-  
ներ շարունակ նա մնաց զերոթյան մեջ,  
թշնամու երկրում:

Պատերազմը վերջացավ...

Գալոն ազատվեց զերոթյանից ու հայրե-  
նիք տանող ճանապարհը բռնեց:

Մի՞թե բոլոր ճանապարհներն էլ նա այդ-  
պես էր անցել, ինչպես այժմյան կենտրո-  
նից գյուղ տանող ճանապարհը:

Կինը վշտից ու սովից վաղոց էր մահա-  
ցել: Որբ մնացած որդուն նա գտավ աներոշ

տանը, որտեղ մի կերպ նրան էլ էին խնամում ու կերակրում:

Գալոն վերցրեց փոքրիկ Արամին և բացեց իր տան դռությ, որ երկար, շատ երկար ժամանակ փակ էր մնացել:

Ոչ միայն Պետունց Գալոյի ընտանիքն էր քայքայվել պատերազմի պատճառով, այլև համարյա ավերվել էր նաև նրա տունը:

Նա համակերպվեց իր վշտի հետ ու սկսեց իր տունը, քայքայված իր տնտեսությունը վերաշինելու մասին մտածել:

Հարեւաններն ու բարեկամնեղն էլ օդնեցին նրան:

Ու կտմաց-կտմաց կարգի ընկալ Գալոյի տունը և ծուխ բարձրացավ նրա երդիկից:

Այս, հայրենի տան ծուխ, ինչքան սիրելի ու խանկապին ես դու:

Հետո զյուղում նոր կարգեր հաստատվեցին, կյանքը փոխվեց և ասլրելը հաճելի դարձավ:

Դաւար կաղնու պես մեծացավ Արամը, աշխարհում նրա միակ հարստությունը, միակ դանձը:



Բայց ահա նորից պատերազմ սկսվեց  
և Գալոն, որ տարիներ շարունակ շէր հե-  
ռացել գյուղից, վիշտն ու դայրույթը սըր-  
տում, ծանոթ ճանապարհով Արամին ուղեկ-  
ցեց շրջկենտրոն, որտեղից նրան շատ շա-  
տերի հետ ճամփեց բանակ:

Գալոն որդուն ճաջողություն մաղթեց,  
բարի վերադարձ:

Խոհերի տակ ծանրացած նա նորից կտրեց  
բոլորին միշտ երկար թվացող ճանապարհը:

Ու ահա հիմա էլ նա դարձյալ անցնում է  
այս ճանապարհը և էլի հանդիստ չէ նրա հո-  
ղին, խաղաղ չէ սիրութ:

Գերմանացիները կատաղած ու սոված  
գայլերի պես՝ առաջ են արշավում: Մերոնք  
թողնում են գյուղեր ու քաղաքներ, հազա-  
րամուր ազնիվ ու երիտասարդ մարդիկ լնի-  
նում են կովի դաշտում:

Մի ամսից ավելի է, ինչ ինքը նամակ շի-  
ստացել Արամից: Դե, ի՞նչ կա, դուք թեժ  
կովի մեջ է և դրելու ժամանակ չունի: Բայց  
այսր հոր սիրու շի կարող հանդիստ ու տն-  
տարրեր մնալ: Այդ դեռ քիչ է, հիմա էլ

շրջկենութիւնում քիմիական դուժարանն է;  
թերակառարում պետական հանձնարարու-  
թյունները, իսկ շրջանային կոմիտեն քննում  
է իրենց կոլտնտեսության հարցը, այն բա-  
նի համար, որ վատ է աշխատում նա: Մի՛-  
թե այդպես պետք է օգնեին իր Արամին,  
ուսկանակատային նրա ընկերներին:

Դե արի ու հանգիստ եղիր, Գալո, արի  
դանդաղ քայլիր ճանապարհով, լսիր թոշուն-  
ների ու գետերի երգը, դիտիր շուրջդ տա-  
րածվող կանաչը, կապույտ երկինքը:

Տներում ճրագներն արդեն վառվում էին,  
իսբ Գալոն գյուղ հասավ:

Նա քայլերն ուղիղ դեպի իր հարեանուհու՝  
Սաթոյի տունն ուղղեց:

— Ալեքի աղջիկ, այ Ալեքի աղջիկ,—դեռ  
հեռվից ձայնեց նա:

— Ներս արի, Գալո քեռի, — սենյակից  
լսվեց մի կնոջ ձայն ու քիչ հետո բացվեց  
դռւոը:

Գալոն անցավ ներս:

Սաթոյի երկու փոքրիկ երեխաները վա-  
ղուց պառկել էին ու քնիլ:

— Սաթո ջան, եղա զի՞նկոմի մոտ, — նըստելով սեղանի մոտ եղած աթոռներից մեկին, խոսեց Գալոն, — խոստացավ նամակ պրել Հակոբի հրամանատարին։ Շատ դարձմի անիր, շուտով մարդուցդ նամակ կստանաս ու ամեն ինչ լավ կլինի, վաստ օրը կմոռացվի։ Տեսնո՞ւմ ես էլի՛, վերջերս Արամի նամակներն էլ սկսեցին պակասել։ Ի՞նչ կարաս անել, համբերել առ պետք՝ նըստք էնտեղ հո անգործ շեն։

— Շնորհակալ եմ, Գալո քեռի, շնորհակալ եմ։

— Սաթո ջան, էդ մեկը մի տաս; Ես հսկու բանը շարի, որ դու ինձ շնորհակալ լինես։ Իրար ճրագ բա որ մենք շվառենք՝ էլ որ օրվա հարեւաններն ենք, մի դյուղի, մի կոլխոզի մարդիկ։ Դարդն էլ սկետք առ միասին տանենք, ուրախությունն էլ։

— Էղպես ա, Գալո քեռի, էղպես ա, — պատասխանեց Սաթոն։

— Ալեքի աղջիկ, էս ի՞նչ ա, — հանկարծ պատից կախված ճրագին նայելով դարձավ Պիտունց Գալոն, — էս ինչո՞ւ ես ճրագդ էս-

ողիս թայլ վտոնէլ: Բարձրացրու, Սախո զտի,  
բարձրացրու, թուլ լույսի մեջ ովովիլի սե-  
նյակդ, իսկ երբ Հակոբից էլ նամակ ստա-  
նաս՝ են վախոը սիրող էլ, հոգիդ էլ լույսի  
մեջ կողողիլի:

Ու Պետոնց Գալոն հենց ինքը շարժվեց  
դեպի պատը:

Բարձրացող լույսը տարածվեց սենյակում:  
Քիչ հետո Գալոն հրաժեշտ տվեց հարևա-  
նուհուն:

### 3.

Հոգնածությունն էր պատճառը, թե մի  
այլ բան, որ Պետոնց Գալոն դիշերը լավ  
քնից ու երկար:

Առավոտյան, երբ նա արթնացավ, արեք  
վաղոց արդին իր շողերը փոել էր դյուսի  
վրա:

Գալոն տնից ուղղակի կոլտնտեսության  
դրասենյակը գնաց:

— Ա. Պետ, ո՞ւր ա մեր Սեթը, — դիմեց նա  
դրասենյակում իր աշխատանքով զբաղված  
հաշվետարին:

— Տանի տ,— անոտարքեր պատասխանեց  
Պետրոսը:

— Տա՞նը, — զարմացավ Պետունց Գա-  
լոն, — բա կոլխոզի նախագահը օրվա էս  
վախտը տանը կմնա՞ , էն էլ գարնանացանի  
նախապատրաստվելու ժամանակ:

— Էղ դու իրան հարցրու, Գալո քեռի, —  
նույն անտարբերությամբ պատասխանեց  
Հաշվետարը, առանց ընդհատելու իր աշխա-  
տանքը:

Պետունց Գալոն լուռ հեռացավ կոլտնտե-  
սության գրասենյակից:

Քիչ հետո նա կանգնած էր Սեթոյի տան  
առաջ:

— Վարսենիկ, — դիմեց նա տան բակում  
տշխատող մի պառավ կնոջ, — տղադ տա՞նն  
տ:

— Էղ ո՞վ ա ինձ հարցնողը, — ներսից  
ձայնեց մեկը:

— Ես եմ, Սեթո ջան, Գալոն ա:

— Գալո, դո՞ւ ես: Էլ ի՞նչ ես կանգնել,  
ներս արի:

Պետունց Գալոն մտավ փոքրիկ բակը,

իփայտե աստիճաններով բարձրացավ վերև  
տան պատշգամբում իրեն դիմավորող Սե-  
թոյի հետ անցավ լուսավոր, մեծ մի սենյակ:

— Բարի օր:

— Բարի օր: Նստիր:

— Ուզում էի հանդ դնալ, ասացի երեխ  
էնտեղ լինես, — նստելով աթոռներից մեկին,  
դանդաղ խոսեց Գալոն, — Պետքուից իմացա,  
որ տանն ես:

— Ես առ սլիտի դնամ: Ի՞նչ կա, հետո  
գործ ունի՞ս:

— Չէ, գործ չունեմ: Հենց էնողիս: Երեկ  
շրջան էի դնացել:

— Շրջա՞ն:

Եվ կոլտնտեսության նախադաշ Սեթոն իր  
հարցական, մասամբ կառկածու հայացքը  
հառեց դիմացը նստած մարդուն:

— Հա: Շրջկոմի քարտուղարի մոտ եղաւ,  
— հանգիստ ասաց Գալոն:

— Շրջկոմի քարտուղարի՝ մոտ. իսկ  
լինի:

— Խերը հետո կեռևա, երբ քիմիական  
գործարանը լավ աշխատի:

— Ուրեմն քիմիական գործարանի հարցով էիր շրջան դնացել, — խաղաղությունը գտած մարդու պես հարցրեց Սեթոն:

Գալոն դրականորեն շարժեց պլուխը:

— Ա'յ Գալո, — կշտամբող շեշտ դնելով իր ձայնի մեջ, խոսեց կոլտնտեսության նախագահը, — ախր քո ի՞նչ բանն առ քիմիական գործարանի հարցերին խառնվելը: Դու ո՞վ, քիմիական գործարանը ովք: Քեզ ինչ, թե նրանք չեն կտտարում պետական ուսուավորությունները: Դու ոչ գործարանի դիլեկտոր ես, ոչ շրջկոմի քարտուղար, ոչ էլ գործկոմի նախագահ: Բա շամաշեցի՞ր, որ վեր կացար մի քանի կիլոմետր ճանապարհ կլորեցիր ու դնացիր շրջանային կոմիտե: Քեզ հետ ի՞նչ կապ ունեն էղ գործերը:

Կոլտնտեսության նախագահը մի ոլո՞ւեց:

Պետունյաց Գալոն շեշտակի նայում էր նրա տչքերին:

— Խոսքիցու չնեղանաս, Գալո, — շարունակեց Սեթոն, — ես բոլորը ես քեզ համար եմ ասում, քո օպտի համար: Ուզում ես, ոլո՞ւ

Հակոբից իւ աղառեմ, զնո Հանդիսո  
ապրիր: Առև լինի Արտմդ: Ինվալիդ ու ծե-  
րացող մարդ ես, փոխանակ տանը նստելու  
և հանգստանալու՝ ամեն ինչին խառնվոմ  
ես: Անունդ արդեն ամենքին հայտնի տ  
ղառել: Ուր որ երկում ես, տսում են, ըհր,  
հիմա սա մեկին մի խիստ խոսք պիտի տսի  
իր հետ կապ չունեցող գործի մասին, մե-  
կին պիտի նախատի վատ աշխատանքի հա-  
մար, և նման բաներ: Ախպեր ջան, մեր  
երկրում ապրող շատ մարդ կա ու ամեն  
մարդ էլ իրա գործը ունի: Դե, ես շասեմ,  
ու տսա՞ր բա էն անելու բա՞ն էր, որ մի  
ամիս տոաց, ձմրան բուք ու բորանին դնա-  
ցիր Մրգաստան, թե ի՞նչ ու էնտեղ գելերը  
անասուն են ոչնչացրել: Է, գնացիր, խոսե-  
ցիր իրլիսովի նախագահի հետ, չոքանների  
հետ՝ հետո՞: Առանց քեզ նրանք էդ հարցով  
չէի՞ն դբաղվելու, հը: Ախր ի՞նչ կապ ունեն  
նրանք քեզ հետ:

— Կապ ունեն, — հանդիսո տսայ Պե-  
տոնց Գալոն, — կապ ունեն: Էն որ քիմիա-  
կան գործարանը թերակատարում ա պետա-

կան Հանձնարարությունը. դա ինձ հետ կապ ունի: Էն որ Մրգաստանում անասունները գելի բաժին են դառնում՝ դա ինձ հետ կապ ունի:

Պետունց Գալոյի ձայնը զողաց և նրա աշքերում փայլեց կրակը:

— Էղ բոլորը ինձ հետ կապ ունեն: Ես տղա եմ Ֆրոնտ ուղարկել, դյուլում երիտասարդ չի մնացել: Ո՞նց թե ինձ հետ կապ չունի: Բա որ գերմանացիները օր օրի վրա ավելի են մոտենում երկրի սրտին՝ դա ինձ հետ կապ չունի: Բա ինձ հետ կապ չո՞ւնի մեր կոլխոզի վատ աշխատանքը:

— Ի՞նչ վատ աշխատանք, ո՞վ ասաց, շրջկոմի քարտուղարը, — անհանդասած հարցրեց Սեթոն:

— Զէ, ուրիշներից իմացա: Երեխ քարտուղարը կարծում էր, որ դու մեղ պատմած կլինես:

— Դե դա ի՞նչ հայտնելու բան ա որ, — և կոլտնտեսության նախագահը դլուխը կախեց:

— Հայտնելու բան ա, Սեթոն զան, — վրա

բերեց Գալոն, — Հայտնելու ըան ա: Մենք էլ  
գիտենք, որ կոլխոզի գործերը լավ չեն  
դնում: Էնպէս պիտի աշխատեինք, որ մեր  
հարցը շրջան շհասներ: Շուտով գարնանա-  
ցանն սկսելու ենք, իսկ գործիքները բոլորը  
վերանորոգված չեն, սերմը լրիվ պատրաստ  
չէ, պարարտանցութերի մեծ մասը դեռ դաշտ  
ի դուրս բերված:

— Գալո ջան, ախր դու էլ մնում, մնում  
ինձ ես կպշում, — բարձրացնելով գլուխը,  
որոնեղած նկատեց Սեթոն, — ապա մի դնա  
Այդեստան, անցիր Կարմրաբլուր: Հենց կար-  
ծում ես, թե միայն մեղ մո՞տ են գործերը  
վատ:

— Դու ինձ վատ աշխատողին ցույց մի  
տուր, Սեթո ջան, ես տոանց քեզ էլ գիտեմ:  
Դու Գեղարոտից օրինակ վերցրու, Զորագյու-  
ղից օրինակ վերցրու: Զինվորը, որ կուի  
դաշտում նստի ու տսի, թե Սաքոն էլ ա  
վատ կուլում, Գուրդենն էլ՝ գերմանացին  
վրա կհասնի ու տանկի տակ կճղմի էղպէս  
խոսողին: Բա վատից օրինակ կվերցնե՞ն:

— Լով, — դիմեց նրան Սեթոն, — տսենք թե

վատից օրինակ չենք վերցնում, համաձայն  
եմ, իսկ որ աշխատող ձեռք չունենք՝ էդ  
ի՞նչպես անհնք, դրան ի՞նչ կասես։ Այս,  
երեխաներով ու կանանցով գարնանցան  
անել չի լինի, կոլխով պահել չի լինի։ Տղա-  
մարդ ա հարկավոր, տղամարդ։ Ինքդ էլ զի-  
տես, որ գյուղում քիչ տղամարդ է մնացել։  
Հենց մեկը դու. ի՞նչ կարող ես անել։ Ոչի՞նչ։  
Հաշվիր, որ երեխաներն ու կանայք քեզ պես  
մի ձեռքանի մարդ են։

— Սխալվում ես, ա Սեթ, — առարկեց Գա-  
լոն, — բա մեր գեղի կանայք վա՞տ աշխա-  
տող են, որ ասում ես։ Հենց վերցրու Փի-  
լոսանց Մարուսին, Ելոյենց Լուսիկին, Սերո-  
բենց Քնարին։ Էլ որ մեկը առեմ։ Էղալիսի-  
ները էնքան շատ են, որ մարդ անունները  
մտքում չի պահում։ Դրանցից ամեն մեկը  
երկու-երեք տղամարդի գործ ու կատարում։  
Չէ, սխալվում ես, Սեթո շան, աշխատող  
ձեռք կտ, գյուղը ձեռքերով լիքն ա, բոլորը  
ինձ պես հո մի ձեռքանի չեն։ Հարկավոր է,  
որ դու կարողանաս աշխատանքը կազմա-  
կերպի, մարդկանց գործի դնել։ Ինչքան որ

աշխատով ոմես, էնքան էլ պարտավորություն են տվել:

— Է, ասում ես էլի, — նեղացավ Սեթոն, — խոսելը հեշտ ա. դրա համար էլ բոլորդ մի գլուխ խոսում եք վրաս:

— Կոլխոզը որ լավ աշխատի՞ էսպես երբեք չենք խոսի քո մասին:

— Է, հիմա էլ թող մի կոլխոզ վաս աշխատի, հո դրանից գերմանացին մեղ չի հաղթի:

— Կհաղթի, — կտրուկ վրա բերեց Գալոն, — կհաղթի, եթե բոլորը քեզ պես մտածեն: Ամեն մի զինվոր պարտավոր ա իր հրացանը կրակել, և էն էլ էնպես, որ ամեն կրակոցին մի գերմանացի սպանի:

— Ախպեր, էն ա մի անգամից ինձ էլ բանակ կանչեն ու սլրծնի դնա էլի', — վիրավորված խոսեց Սեթոն, — թէ չէ՝ ինչի նման ա. շրջկոմը սեղմում ա, կոլխոզնիկը սեղմում ա, թերթը սեղմում ա: Ով պատահում ա՞ մի գլուխ ինձ ա մեղավոր ճանաշում:

— Սեթո ջան, դու կարծում ես, թէ ես մենակ քե՞զ եմ մեղավոր ճանաշում մեր

Ղատ աշխատանքի համար,—դարձավ Գալոն,—չէ, ախպերս: Բոլորս ենք մեղավոր, ամա դու բոլորից շատ: Նախագահ ես, հասկանո՞ւմ ես: Քեզ ընտրելիս ձեռք ենք բարձրացրել, իրավունքներ ենք ունել քո ձեռքը, հիմա էլ պահանջում ենք: Ես էլ եմ ձեռք բարձրացրել, ճիշտ ա, ձախը, բայց մեկ ա, ես էլ պահանջելու իրավունք ունեմ: Պետունց Գալոն լոեց: Նրա դեմքի մկանները կծկվեցին: Այտերի կնճիռների մեջ աշքերից աննկատելիորեն հոսող արցունքի մասը կաթիլներ երևացին:

— Գերմանացոմ ես վաղուց եմ ճանաշում, Սեթո ջան,—հուզված խոսեց նա,— այս, աջ ոտիս վրա նրա հետքը: Նրա սկսած էս կոխվը ուրիշ բան ա: Իմ օջախը դերմանացին քանդեց: Գերմանացին որ հաղթի էս կովում, սաղս մի թևանի կղանանք, կը-քանդիի մեր տունը, կմարի մեր օջախի կրակը: Պիտի շատ աշխատենք, դիշերը չպիտի քնինք՝ մենակ թե հաղթողը մենք լինենք: Ամա, այս, օրը կես ա դառիւ, իսկ դու դեռ նստած ես տանը:

— Զէ, ճիշտ եմ ասում, ես պիտի դիմեմ,  
որ ինձ ֆրոնտ ուղարկեն, — ասաց Սիթոն և  
ստքի կանգնեց:

— Որ պետք զգան, առանց քեզ էլ կու-  
լարկեն, — նկատեց Գալոն, — եղ բոլորը ես հո-  
գրա համար շասի: Քեզ որ ֆրոնտ տանեն՝  
մեկ ուրիշը կնստի քո տեղը: Հո բոլորին բա-  
նակ չեն տանի. Էստեղ էլ ա աշխատող  
պետք: Հիմա ամեն տեղ էլ բանակ ա, ամեն  
մտրդ էլ իր աշխատանքով կովում ա զեր-  
մանացու հետ: Մնում ա, որ ամենքս լավ  
զինվոր լինենք, հասկանո՞ւմ ես, լավ զին-  
վոր: Դու ինձ ասում ես, թե՝ ա'յ Գալո, քո  
ի՞նչ բանն ա ուրիշի դործին խառնվելը, ու-  
րիշի խերին ու շառին խառնվելը: Բայց հի-  
մա ես քեզ եմ հարցնում, չանհանգստանա՞մ  
ես էն բանի համար, որ գյուղից էսքան ժա-  
մանակ ֆրոնտ զնացած տղաներից ոչ մեկը  
դեռ աչքի չի ընկել, ոչ մեկին պետությունը  
շքանշան չի տվել, ոչ մեկին մասին թերթում  
չին գրել: Իմացա՞ր, թե երկու շաբաթ առաջ  
ջեղարոտի տղաների մասին թերթերում ին-  
չիր էին գրե՞լ: Սիրոս մաշվում ա, ամա

ի՞նչ տնեմ, գրոնտ զնուլ շեմ կարով, որ մի  
լով հուրմաթ տամ նրանց: Բա դա ինձ հետ  
կա՞ռ շունի, քեզ եմ հարցնում:

— Թող լով կավեն, որտ մեջ էլ ես հո մե-  
ղավոր շեմ:

Պետունց Գալոն էլ ոտքի կանոնեց:

— Արի մենք լավ աշխատենք, Սեթո զան,  
— ասաց նա, — մի քիչ ձգիր քեզ, կոլխոզնիկ-  
ներին ձգիր: Յրոնտում ողերքը որ մեր աշ-  
խատանքի ձենը լսեն, նամուսի կդան:

— Տեսնենք, Գալոն զան, տեսնենք, — հան-  
դիսու ասաց Սեթոն և վերցրեց պատից կտ-  
սած պլխարկը:

Բաժանվելով նրանից, Պետունց Գալոն  
համոզվեց, որ երեխ դեռ երկար ժամանակ  
իրենց կոլտնտեսությունը մնաւ այդ վիճա-  
կում և շրջանում երեխ դեռ երկար խոսեն  
իրենց վատ աշխատանքի մասին:

#### 4.

Սեթոն ճիշտ էր նկատել. Պետունց Գա-  
լոյին գիտեին ոչ միայն իրենց մոտ, հարեւան  
գյուղերում, այլև շրջանային կենտրոնում:  
32

Նիս անունը Հայտնի էր բոլորին, և Հայտնի  
էր որպես միշտ «ուրիշի գործերին խառնը-  
վող»-ի:

Ուր երեսմ էր նա, ում մոտ գնում էր, ար-  
դեն դիտեին, որ նա հիմա մեկին պետք է  
նախատի վատ գործի համար, մի երկրոր-  
դին ինչ որ բանի համար օգնության կանչի,  
մի երրորդին ինչ որ հանձնարարություն  
անի:

Առաջ, ճիշտն ասած՝ նա այդպես շեր:  
Սկսվեց պատերազմը և նրա բնավորության  
մեջ երևաց այդ գիծը:

Որդուն բանակ ուղարկելուց հետո, նա  
տանը մնացել էր մենակ:

Ինչպես ուրիշները շեին թողնում որ նա  
զգա իր մենակությունը՝ ծանր ու սիրտ մա-  
շող ապրումներով լի այդ մենակությունը,  
այնպես էլ նա էր իր ամբողջ ժամանակը,  
իր սերը, իր ուրախությունը բաժանում այդ  
մարդկանց:

Ուրիշի վիշտն ու դժբախտությունը դարձ-  
նելով իր սեփականը, նա աշխատում էր այդ

վիշտը, այդ զժրտխոսությունը տմորով միշոցներ գտնել:

Նա իր սրտին մոտ էր ընկունսմ ոչ միայն իրենց գյուղում, համագյուղացիներին վերաբերող գործերը, այլև այն ամենը ինչ պատահում էր հարեւան գյուղերում, այն ամենը՝ ինչի մասին կարողանում էր լսել նա:

Հաճախ օրերով բացակայում էր տնից:

Հետո պարզվում էր, որ հարեւան ինչ որ գյուղում մի կին երկար ժամանակ չի կարողանում ստանալ օրենքով իրեն հասնող թոշակը, որ գյուղերից մեկում ինչ որ մի մարդ ուզում է բաժանվել կնոջից, նրա վզին թուլնելով երեք փոքրիկ երեխա, որ ինչ որ մի տեղ աշխօռերի բաշխման ժամանակ թյուրիմացություններ են եղել:

Գալոն լսում էր այդ ամենը և սիրով փոթորկվում էր:

Ու նա սուս ու փուս փակում էր իր տան դռուը և բռնում դեպի այդ գյուղերը տանով ձանապարհը:

Հարթելով ամեն ինչ՝ նա հանգիստ վերադառնում էր տուն:

Եվ այդպես նա անց էր կացնում իր օրենը. իմաստ, բովանդակություն տալիս իր կյանքին:

Աղասի ժամանակ, Գալոն կեսօրվա մոտերքին միշտ դուրս էր գալիս գյուղից, բռնում զեպի շրջկենտրոն տանող ճանապարհը, և հասնելով այդիներին, նստում մի ծառի տակ:

Այդուղ նա սպասում էր շրջկենտրոնից վերաբարձող փոստատար Վանոյին:

Երեսմ էր Վանոն իր նիհար ձիուն նըստած:

— Իշխո, Վանո, նստիր մոտս, մի քիչ հանգստացիր, — դիմում էր նա փոստատարին, — մի թերթ հանիր, տեսնենք ի՞նչ կա ֆրոնտում:

Այնպես էր ստացվում, որ օրվա թերթը դյուղում տուածինը միշտ Պետունյ Գալոն էր կարդում:

Եվ շատերը նրան գյուղամիջում, իր տան շեմքին կանգնած տեսնելիս, հենց նրան էին դիմում սազմաճակատի մտսին մի բան իմտնալու համար:

Շատերը հաճախ նրա դեմքին նայելին,  
արդեն կռահում էին, որ ուղմաճակատում  
դրությունը դեռ վատ է, որ գերմանացին դեռ  
նեղում է մերոնց:

Բայց շուտով ասես դրությունը փոխվեց  
և Պետունց Գալոյի դեմքի կնճիռներն սկսե-  
ցին բացվել:

Համագյուղացիները նրանից ամեն օր մեր  
զորքերի հաղթանակների մասին սկսեցին  
լսել, գերմանացիներից ազատագրված մեր  
քաղաքների մասին իմացան:

Պետունց Գալոյի դեմքին ժպիտ էր երե-  
վացել և այն բանի համար, որ կոլտնտե-  
սության պործերն սկսել էին լավանալ:

Շրջկոմի բյուրոյի հայտնի նիստից մի  
քանի օր անց՝ Սեթոյին ազատեցին աշխա-  
տանքից. նրան վոխարինեց բրիգադիր Եղո-  
րը, եռանդուն մի տղա:

Կոլտնտեսությունը տեղից շարժվեց,  
մարդիկ հենց տոտքին օրվանից թափահա-  
րեցին իրենց:

Այժմ դարնանացան արդեն սկսվել էր և  
եթե պործերը միշտ ալղակ զնալին, աշնաւ-

նը կոլտնտեսությունը պարզ երեսով կնայե՞ր  
հարևան՝ գյուղերին, շրջանային կոմիտեին,  
ռազմաճակատին:

Այդ օրերին թիրթերում էլ լուրեր երեա-  
ցին գյուղից բանակ գնացած տղաների մա-  
սին՝ Սոսունց Սեղբակի, Սեփոյենց Լևոնի,  
Սարգսենց Գրիգորի մասին։ Լավ էին կըռ-  
փում նրանք. հալաւ լինի նրանց կերած հա-  
ցը։ Այ, հիմի վարդաշենցիները բաց ճակա-  
տով կնայեն բոլորին։

Մի տխրություն կար միայն Պետունց Գա-  
լոյի սրտում, որ նա պահում էր իր համար,  
միայն ու միայն իր համար. Արամից դար-  
ձյալ ոչ մի լուր չկար։

Երբ հարեւաններն ու համագյուղացիները  
հարցնում էին նրան այդ մասին, նա բոլո-  
րին միշտ նույն պատասխանն էր տալիս.

— Կովող մարդ ա, երեի ժամանակ չու-  
նի։ Մի օր կպիի։

Ու օրերն անցնում էին, բայց Արամից ոչ  
մի լուր, ոչ մի նամակ չէր դալիս։

ՊԵՏՈՒՆԾ Գալոն Հանդիսաւ ճաշում էր,  
երբ մի երեխա դրսում տվեց նրա անունը:  
— Ի՞նչ կա, այ Կարո, — շեմքում երևալով  
հարցրեց նա:

— Կոլխոզի գրասենյակում շրջանից եկած  
մի մարդ քեզ առ ուղում, — պատասխանեց ե-  
րեխան:

— Էս առ գալիս եմ, — տսաց Գալոն:  
Քիչ հետո նա կոլտնտեսության գրասե-  
նյակի շեմքից անցավ ներս:

Այնտեղ էին եղորը՝ կոլտնտեսության նոր  
նախագահը, Սեթոն, որ այժմ բրիգադիր էր  
և միշտ խուսափում էր ՊԵՏՈՒՆԾ Գալոյին  
Հանդիպելուց, և էլի մի քանի ուրիշ կոլտըն-  
տեսականներ:

Հավաքվածների մեջ Գալոն տեսավ շրջա-  
նային կոմիտեի քարտուղարին:

— Բարե ձեզ, ընկեր Գալոն, — գրասենյակ  
մտնողին դիմեց վերջինս:

— Բարե ձեզ, ընկեր քարտուղար:

Գյուղացիները Պետության Գալոյին էլ նըստելու աթոռ տվին:

— Գյուղերն էի զնացել, —խոսեց շրջկոմի քարտուղարը, —ձեր դաշտերում էլ եղա: Այ, հիմա ուրիշ է ձեր դրությունը:

— Հա, հիմա լավ ենք, —ասաց Պետության Գալոն:

— Շրջկենտրոն զնալուց առաջ ուղեցի ձեզ էլ տեսնել, —նորից խոսեց քարտուղարը:

— Շնորհակալ եմ, ընկեր քարտուղար, —ասես անհարմարությունից կարմրեց Գալոն, —շնորհակալ եմ:

— Այո՛, հիմա դուք լավ կլինեք, —դարձավ քարտուղարը, —հիմա լավ կլինեք. Հէ՞ որ ճակատում գործերը լավ են, թիկունքում լավ են: Հիմա մեր գործադրանն էլ է լավ աշխատում. ևս հենց ուղում էի ձեզ ցուցյ տալ նրա ամսական ցուցանիշները:

Եվ նա ծոցագրականից հանելով մի թուղթ՝ մեկնեց Գալոյին:

Վերջինս վերցրեց թուղթը և լուս նայեց այնտեղ եղած թվերին:

— Տեսնո՞ւմ էք, քսան տոկոսով էլ զիո  
ղերակատարում ին պետական հանձնարա-  
րությունները, — ասաց քարտուղարը, — շու-  
տով այդ տոկոսը ավելի կբարձրանա:

Պետունց Գալոն թուղթը վերադարձրեց  
նրան և ամուր, խիստ ամուր սեղմեց նրա  
ձեռքը:

Ապա դեռ երկար զրուցեցին կոլտնտես-  
կաններն իրենց շրջանացին կոմիտեի քար-  
տուղարի հետ:

Հետո քարտուղարը կամեցավ շրաժեցա  
տալ նրանց:

Գյուղամիջուկ անցնող ճանապարհով կոլ-  
տնտեսականները մինչև գյուղի ծայրը ու-  
ղեկցեցին նրան:

Առջևից դանդաղ առաջ էր շարժվում շրր-  
ջանացին կոմիտեի քարտուղարի ավտոմեքե-  
նան:

Քիչ հետո քարտուղարը սեղմեց կոլտըն-  
տեսականների ձեռքը և քայլերը դեպի իրեն  
սպասող մեքենան ուղղեց:

Պետունց Գալոն էլ շարժվեց առաջ:

— Վանովին պիտի հանդիպեմ, — ասաց նա  
համագյուղացիներին:

Այգիների միջով ճգվող ճանապարհով ա-  
ռաջ սուրացող ալտոմեքենան անցավ իր  
նիշար ձիու վրա նստած ու դեպի գյուղը  
շարժվող մի գյուղացու կողքից:

«Զիավորը նայեց մեքենայի մեջ նստած  
մարդուն և բարեկց նրան:

Դա փոստատար Վանոն էր, որ վերադառ-  
նում էր շրջկենտրոնից:

Քիչ հետո Պետունց Գալոն և փոստատա-  
րը հասան իրար:

— Թարի օր:

— Թարի օր, Վանո:

Փոստատարը ձին կապեց ճանապարհի  
մի կողմում զտնվող ծառից և ինքը նստեց  
նրա տակ:

— Դե, փոստդ բաց արտ, — նրա օրինա-  
կին հետեւելով՝ դարձավ Գալոն, — էսօ՞ր էլ  
նամակ չունիմ:

Ո՞չ, այս անգամ էլ Արամը իր հորը նա-  
մակ չէր դրել:

Թուրոր նամակների հասցեները մեկ-մեկ

կարտալուց հետո, Գալոն ծանր շունչ քաշեց,  
հետո վերցրեց կենտրոնից ստացվող օրվա  
թերթը:

Առաջին հերթին նա հայացքը հառեց  
ուղմաճակատին վերաբերող հաղորդագրու-  
թյուններին:

Այսպէս, գերմանացիներին միայն այս-  
պէս պետք է պատասխանել, ովերք զան:

Պետունց Գալոն շինելի աջ ծոցագրականից  
հառեց քրքրված մի փոքրիկ քարտեղ և զգու-  
շությամբ փոեց գետնին:

— Գերմանացիները զիւ են փախչում,  
Վանո զան,— ասաց նա իր ամեն մի շար-  
ժումին ուշադրությամբ հետեւղ փոստատ-  
րին:

Ասլա նա կարմիր մատիտով քարտեղի  
վրա ինչ որ նշաններ կատարեց:

Փոստատար Վանոն տեսնում էր, որ օրեց-  
օր ավելի են շատանում այդ նշաններ՝  
գերմանական գերությունից հայրենի երկու  
դիրկիլ վերադարձող քաղաքները:

Քարտեղն զգուշությամբ ծալելով և ծոցա-

կրպանում դնելով, Գալոն սկսեց թերթի  
մյուս հոդվածներն աշքի անցկացնել:

Ահա խիզախների մասին հոդվածներ: Ա-  
հա պարզեատրումների հրամանագրեր:

— Վայ, — հանկարծ ասես ճշաց նա և ա-  
րագ ոտքի կանգնեց, — օրէնվիս դու կառա-  
վարություն:

— Ի՞նչ ա եղել, Գալո, — ոչինչ չհասկա-  
նալով, զարմացած դիմեց նրան փոստատար  
Վանոն:

Գուցե ծերությունն էր պատճառը, կամ իր  
մասնագիտության միօրինակությունը, որ  
փոստատար Վանոն անտարբեր էր դարձել  
դեպի գյուղ բերվող նամակն ու թերթը, և  
նա շատ շատերի պես հաճախ հենց Գալո-  
յից էր իմանում օրվա նորությունները, ուղ-  
մաճակատի դրությունը:

— Ի՞նչ ա եղել, — ձայնը երկարացրեց  
Գալոն, — շուտ ձիդ նստիր ու հետեւիցս եկ.  
Կյուղում ամեն ինչ կիմանա:

Ու Պետունց Գալոն իրեն գցեց գյուղ տա-  
նող ճանապարհը, ձեռքին պինդ բոնած օր-  
վա թերթը:

Ի՞եռ Հեռվից Համագյուղացիները՝ ծննդունիներ, կանայք, երեխաներ, նկատեցին հերձև գյուղին մոտեցող Գալոյին:

— Գալո ջան, էդ ի՞նչ ա պատահել, գազետում լավ բան ա գրված, — դիմեց նրան մի պառավ կին:

— Հա, Շուշան, լավ բան ա գրված, — ասաց Գալոն, շարունակելով իր ճանապարհը:

— Այ տղա, մինի թե կոխվն ա վերջացել, — նրա հետեւյց ձայնեց մի ծերունի:

— Չէ, մեր գյուղի մասին ա, — ասաց դիպի առաջ շարժվող Գալոն:

— Մեր գյուղի մասին:

Եվ Համագյուղացիները՝ ծերունիներ, կտնայք ու երեխաներ ընկան Գալոյի հետեւյց:

Հետզետե Գալոյին հետեւողների թիվն ավելի շատացավ:

Նրանք անցնում էին գյուղի փողոցներով, առջեւից Պետունց Գալոն, թերթը ձեռքին բարձր պահած՝ ասես հենց զորք էր կովի առաջնորդում:

.....

Հասնելով Սոսունց տանը, Գալոն կանգ  
տապէ:

Կանգ առան և համագյուղացիները:

— Աղջի, Անթառամ, սեղան բաց արա, —  
ուժեղ հնչեց Գալոյի ձայնը:

Կնճոռոտած դեմքով մի պառավ կին երեաց  
տան պատշգամբով:

— Ի՞նչ կա, Գալո, — հարցրեց նա, — Սեղ-  
րակիցս նամակ ա եկել:

— Ի՞նչ նամակ, ի՞նչ բան, Անթառամ,  
ու սեղան բաց արա, դինի բեր. ամեն ինչ  
հիմա կիմանաս:

Պառավը շփոթված անցավ ներս:

Մինչ այդ բակում բավական բազմություն  
խոնվեց:

— Ախր մի ասա տեսնենք թե ի՞նչ կա,  
է, — դարձավ Գալոյին մի գյուղացի, — ուրտ-  
ներս ճաքեց, այ տնաշեն:

— Հիմա, հիմա ամեն ինչ կիմանաք, քիչ  
է համբերեք:

Թերթը ձեռքում ամուր բռնած, Պետունց  
Գալոն ուրախ նայում էր իր համագյուղա-  
ցիներին:

Քիչ հետո պատշպամբում նորից երևայ պառավ Անթառամը. այդ նշան էր, որ սեղանը պատրաստ է:

Պետունց Գալոն համարձակ ու հաստատուն քայլերով բարձրացավ ասոիծաններով և անցավ սենյակը:

Բակում հավաքվածները հետեւցին նրան: Բոլորը նստեցին սեղանի շուրջը:

— Դե, բաժակներ վերցլիք, Անթառամ, բաժակ վերցրու, — դարձավ համագյուղացիներին Գալոն, ձեռքին բարձր պահելով օրվա թերթը, — խմենք մեր գյուղի պարձանք, մեր բոլորիս սիրելի, Սովետական Միության Հերոս Սիմոնյան Սեղրակի կենացը:

— Սեղրակս, — պառավ Անթառամը շկարողացավ էլ ոչինչ սեղ:

Գինու լիքը բաժակը ընկավ նրա ձեռքից: Գյուղացիները թերթը խլեցին Գալոյի ձեռքից:

— Սեղրակը, — բացականշեցին նրանք՝ ոմանք զարմացած, ոմանք ուրախ, ոմանք էլ դեռ լրիվ չհասկանալով Գալոյի ասածը:

Դալոն սրբեց աշքերից հոսող արցունքները և վերցրեց պինու լիքը բաժակը:

— Հա, Սեդրակը, վարդաշենցի Սեդրակը, Սոսունց Սեդրակը, — բարձր ասաց նա և դատարկեց արյան պես կարմիր, արյան պես թանկաղին դինին:

### 6.

Գարնանացանի աշխատանքները եռում էին:

Դաշտերում անընդհատ հոնդում էին տրակտորները և ակոսվում, հա ակոսվում էին հողերը:

Լեռներից լովում էր գութանավորի քաղցր, դուրեկան և զրնվուն երգը:

Հողի տասնյակ հեկտարներ ամեն օր իրենց զիրկն էին առնում մաքուր, առողջ սերմը, որ մի քանի ամիս հետո հասկավորվեն ու սոկու զեղին, վայլուն և տատ շեղչերով լցնեն գյուղը:

Պետունց Գալոն առավոտից մինչև երեկո իինում էր դաշտերում: Նա անցնում էր օղուից օղակ, բրիգադից բրիգադ:

Մի տեղ հանդսայտ ժամին նա պատմում

էր սազմաճակատի մասին, մի տեղ գովում  
էր մեկին իր լավ աշխատանքի համար, մի  
երրորդին կոչ էր անում հետևել այդ առա-  
ջավորին:

Այսօր նա սովորականից ավելի շուտ դը-  
նաց դաշտ:

Դուրս դալով անից, նա քայլերն ուղղեց  
դեպի այն հողամասը, որտեղ՝ աշխատում էր  
Արտաշի բրիգադը:

Սոսունց Սեղրակին Սովետական Միու-  
թյան Հերոսի կոշում շնորհելու լուրն իմա-  
նալով՝ բրիգադի անդամները նամակ էին  
գրել իրենց ընկերոջը, իրենց բրիգադի նախ-  
կին անդամին:

Նամակում նրանք Սեղրակին պատմել էին  
իրենց կյանքի ու աշխատանքի մասին:

Երեկ ուշ երեկոյան Պետունց Գալոն իմա-  
ցավ, որ Սոսունց Սեղրակից ստացվել է պա-  
տասխան նամակը:

Եվ այսօր նա շտապեց դաշտ՝ տղաների  
մոտ, իմանալու, թե ի՞նչ էր գրել նա իր նա-  
մակում, իր Արտմի մասին ոչինչ չէ՞ր հայտ-  
նել:

Բրիգադի անդամները սիրով առան Գալու-  
յի բարեկը և շարունակեցին իրենց աշխա-  
տանքը:

Պետունց Գալոն սպասեց, մինչև որ եկավ  
հանգստյան ժամը: Հետոնա Արտաշից հարց-  
ուեց Սեղրակի նամակի մասին:

— Հո, Գալո քեռի, քեզ էլ ա բարեկ, —  
ասաց բրիգադիրը:

— Սաղ լինի, թող սաղ լինի ու բարեկ,  
Արտաշ ջան: Իսկ ի՞նչ ա գրում:

Արտաշը կարդաց ստացված նամակը:

Սոսունց Սեղրակը նախ և առաջ շնորհա-  
կալություն էր հայտնում տղաներին, որ ի-  
րեն չեն մոռացել, հետո ճակատի մասին էր  
խոսում, թիկունքի մասին, հետաքրքրվում  
էր բրիգադի անդամների կյանքով ու աշխա-  
տանքով, տսելով, թե թող նրանք առաջնու-  
թյունը անցյալի պես ոչ ոքի չգիշեն:

Սոսունց Սեղրակը ուղմաճակատի այլ  
հատվածներում գտնվող իր համագյուղացի-  
ների՝ Սեփոյենց լեռնի, Սարգսենց Գրիգորի,  
Եգորենց Թեհանի մասին էլ էր գրում, որոն-  
ցից նա շարունակ նամակներ էր ստանում:

Պետունց Արամից վերջերս ինչ որ լուր շունի նա: Սեղրակը խնդրում էր, որ նրա մասսին էլ իրեն գրեն:

Վերջում սկսվում էին բարեները՝ բրիգադի անդամների ընտանիքներին, գյուղում մնացած իր ընկերներին, ծանոթներին ու բարեկամներին:

Ուրիմն Արամը Սոսունց Սեղրակին էլ չէր գրում: Ոչ մեկը լուր շունի նրանից:

Կեսօրը վաղուց էր անցել, երբ Գալոն գյուղ վերապարձավ:

Գյուղամիջում Պետունց Գալոն հանդիպեց շրջկենտրոնից եկող վիստատարին:

— Գալո, — մոտեցավ նրան վերջինս, — զինվորական կոմիսարին հանդիպեցի, իւրնդրեց, որ անպայման իրեն տեսնես:

— Հա՞՛, շտա լավ, Վանո ջան, — տասց Գալոն:

Օրվա թիրթը նայելուց հետո, նա դեպի տուն շարժվեց. Հոգնած էր զգում իրեն:

— Երկի Հակոբի մասին տեղեկություն ուտացվել, — հանտակարհին մտածեց նա:

Օրոշեց անցնել Սաթովի մոտ և նրան

Հայսնել այդ մասին, բայց խորոշն էր ա  
ժարվեց իր մտադրությունից:

— Ենքան որ սպասել ա՛, թող մի օր էլ  
սպասի, — վճռեց նա, — ո՞վ զիտի, գուցե մար-  
դու մասին զինկոմի ստացած տեղեկությու-  
նը էնքան էլ լավը Ահնի: Վատ բանը ինչքան  
ուշ իմացվի՝ էնքան լավ:

Հետո նա խորը ախքաշեց:

— Արամիցս էլ մի խաբար գար, էլ դարձ  
շեմ ունենա՞ աշխարհիս երեսին, — ինքնիրեն  
խոսեց նա:

Իր տունն էր հասել, երբ հեռվում նկա-  
տեց դեպի կոլտնտեսության գրասենյակը  
շարժվող նախագահին:

Նու մի պահ կանգ տռավ, ինչ որ բան  
մտածեց ու.

— Եգոր, այ Եգոր:

Կոլտնտեսության նախագահը փոխելով իր  
հանապարհը, մոտեցավ նրան:

— Եգոր ջան, մի քանի բռպեռվ շե՞ս  
անցնի մոտս, հետդ դործ ունեմ, — դիմեց  
Գալոն նրան:

— Ինչու չէ:

Յ Յուավուրը գնում էր շրջան, —քիչ հետո  
դարձավ նա նախապահին, երբ երկուսն էլ  
նստել էին փափուկ թախտի վրա:

Կոլտնտեսության նախագահ Եղովը ինչ ո՞՛  
անհանգիստ շարժում արեց, վինի՞ թե Գա-  
լոն շէր հավանել մի բան, դժուճ էր ինչ ո՞՛  
մեկի աշխատանքից:

— Իսկ ի՞նչ գործով, —հարցրեց նա:

— Հետ, անձնական, —պատասխանեց Գա-  
լոն, —գյուղի հետ կապ չունի:

— Հիմա ինձնից ի՞նչ ես ուզում, —հան-  
գիստ դարձավ նրան Եղովը:

— Գիտե՞ս, թե ինչ մտածեցի քեզ տես-  
նելիս, Եղով ջան, —սկսից Գալոն, —Արտա-  
շի բրիգադը Սոսունց Սեղրակից ստացել ա-  
խրենց գրած նամակի պատասխանը: Ես էլ  
ծանոթացա նամակի հետ: Տղային էդ բանը  
շատ առախացրել: Ասում եմ՝ վատ չի լի-  
նի, որ մի նամակ էլ դու գրես նրան քո ա-  
նունից, սաղ կոլխոզի անունից: Գյուղի, կոլ-  
խոզի պարծանքն ա Սեղրակը. ո՞նց կարե-  
լի ա նրան հենց գյուղի անունից նամակ շ-  
գրել: Կառավարությունը նրան հերոսի կո-

չինք առ տվյալ. թա կոլխոզի անունից շշնօթա  
հավորե՞նք, շասենք, թե ախաղեր ջան, դու<sup>է</sup>  
էստեղ ես հերոսի պես խփում գերմանացուն,  
մենք էլ էստեղ ենք աշխատում քեզնից ետ  
շմնալ:

— Ճիշտ ես ասում, Գալո, կարելի տ  
կրել, — համաձայնեց կոլտնտեսության նա-  
խագահը:

— Գրիր, Եգոր ջան, պատմիր մեր մասին,  
որ նա է՛լ ավելի ողևորված կռվի:

— Լավ, — տսաց Եգորը և ոտքի կանգնեց:

— Էսօր գրիր, գիտե՞ս, — դարձավ Գա-  
լոն, — էնպես լինի, որ առավոտը հետո շըր-  
ջան տանեմ ու իմ ձեռքով փոստը դցեմ:

— Երեկոյան վարչության նիստ ունենք,  
նիստից հետո անպայման կգրեմ:

— Էղակես արա, Եգոր ջան, — նրան դեպի  
դուրս ուղեկցելով խոսեց Գալոն, — գրիր ու  
րեր պատուհանից ներս դցիր. առավոտը  
վայ թե շուտ գնամ ու շկարենամ քեզ տես-  
նել:

Սենյակում մենակ մնալով, Պետովց Գա-  
լոն նստեց սեղանի մոտ, վերցրեց մի թուղթ,

մատիո՞ն ու վառած ճրագլ մոտեցրեց իրեն։  
Նա էլ նամակ գրեց իր Արամին, իր մի-  
ակ որդում, որ վազը շրջկենարոնում Եղորի  
նամակի հետ ուղարկի ուղմաճակատ։

Նամակը վերջացնելուց հետո, նա մի րո-  
պե լուռ նստեց և հայացքը սենյակի պատու-  
հանից հառեց դուրս։

Արդեն խտացող խավարի միջից նա նա-  
յում էր դեպի հեռումերը, ասես իր աշքերի  
առաջ ուղմաղաշտն էր փոված և նա այն-  
տեղ փնտրում էր իր Արամին, իր միակ որ-  
դում։

## 7.

Առավոտյան դեռ արեք չէր ծագել, որ Գա-  
լոն արթնացավ, հագնվեց, վերցրեց կես գի-  
շերին պատուհանից ներս գցած Եղորի նա-  
մակը և ճանապարհ ընկավ դեպի շրջանային  
կենտրոն։

Նրա հողին դարձյալ հուզված էր, հուզ-  
ված այն բանի համար, որ շրջանային դին-  
վորական կոմիսարը անուշադրության շմատ-  
54

նեց իր խնդիրը և հոգատարություն հանդիս  
բերեց դեպի ճակատայինի ընտանիքը, այն  
բանի համար, որ հիմա Սաթոն մի տեղեկու-  
թյուն կստանա ամուսնու մասին։

Բայց ի՞նչ լուր էր եկել Հակոբից՝ լավը,  
թե վատը։

Թո՛ղ, թո՛ղ լավ լուր հայտնի իրեն զինվո-  
րական կոմիսարը, ուրախ լուր հայտնի։ Հէ՛  
որ Սաթոն մեն-մենակ կին է, երկու երեխա-  
ների մայր։

Թո՛ղ վիշտը երբեք շիջնի այդ երեխաների  
որսի վրա։

Ելանի թե շուտով իր Արամից էլ մի տե-  
ղեկություն ստացվեր։

Արեն արդեն վալոց էր դուրս եկել, երբ  
զետունց Գալոն հասավ շրջանային կենտ-  
րոն։

Կոմիսարիատում բարեկելով ծանոթ աշխա-  
տակիցներին, նու ուղիղ անցավ դինկոմի ա-  
ռանձնասենյակը։

— Ա, եկա՞ր, — աշխատանքը ընդհատե-  
լով՝ դարձավ նրան զինկոմը, — նստիր։ Է՛,  
ի՞նչպես են դործերը դյուզում։ Կարծիմ հի-

մա լավ են չէ՞։ Շրջկոմի քարտուղարը դոհ  
է ձեզնից։

— Հա, լավ են, — ասաց Գալոն։

— Ճակատում էլ են գործերը լավ, — դար-  
ձյալ խոսեց զինկոմը, — մերոնք նեղում են  
գերմանացիներին։ Հիմա կովի վերջը պարզ  
երևում է։

Զինվորական կոմիսարը լոեց։

Պետունց Գալոն այդ լուրջան մեջ ինչ որ  
ծանրություն, ինչ որ տիրություն զգաց։

— Ընկեր զինկոմ, — անհամարձակ դիմեց  
զինկոմին նա, — Ձինի՞ թե Հակոբից վաս-  
լոր ա եկել։

— Ո՞չ, ո՞վ ասաց, — դարձավ զինվորա-  
կան կոմիսարը, — ընդհակառակը։ Հենց երեկ  
նամակ ստացա նրա հրաժանատարից։ Բա-  
նից պարզվում է, որ զորամասը երկար ժա-  
մանակ շրջապատման մեջ է եղել։ Առաջին  
շրջանում շկարողանալով ճեղքել թշնամու-  
օվակը և միանալ մեր զորքերին, զորամասը  
մի կերպ անցել է հակառակորդի թիկունքը և  
միացել այնտեղ գործով պարտիզանական  
մի զոկատի։ Ամիսներ շարունակ նրանք դեր-

մանացիների ղիմ կովել էն ոլարտիզանների  
հետ միասին։ Հենց որ մեր զորքերն առաջ  
են շարժվել, զորամասը նորից միացել է  
նրանց ու հիմա զարձյալ շարունակում է իր  
գործը։ Այ, զորամասի հրամանատարի նա-  
մակը Գևորգյան Հակոբի մասին։ Վաղը,  
մյուս օրն էլ հենց կինը ամուսնուց այդպիսի  
նամակ կստանա։

Եվ զինվորական կոմիսարը սեղանի վրա-  
յից վերցնելով մի ծրար՝ մեկնեց Գալոյին։

— Շատ շնորհակալ ենք, լնկեր զին-  
կոմ, — ուրախացած ասաց վերջինս և ոտքի  
կանգնեց, — շնորհակալ ենք՝ ես էլ, Սաթո՞ն  
էլ, մերո՞նք էլ։ Դու սրանով շատերին ուրա-  
խացրիր։ Դե, բարով մնաս, ես զնամ գյուղ,  
նամակը Սաթոյին տանեմ։

Պետունց Գալոն շարժվեց դեպի դուռը և  
ձեռքը մոտեցրեց նրան։

Իր հետեւից նա հանկարծ լսեց զինվորա-  
կան կոմիսարի ձայնը։

— Գալու

Պետունց Գալոն կանգ առավ, ծածկեց կի-  
սաբաց դուռը և շրջվելով, նայեց զինկոմին։

Զինվորական կոմիսարի հայտագրի մեջ նու  
տիրության շեշտ տեսավ:

Դալոն դանդաղ շարժվեց տաշ և նստեց  
աթուին:

— Ուրիշ պոլծ ունե՞ս ինձ հետ, ընկեր  
զինկոմ, — ընդհատեց նա անհարմար լուս-  
թյունը:

Զինվորական կոմիսարը ոշինչ չտաց, նա  
ձեռքը տարավ դեսի դրասեղանի դարակը  
և այնտեղից մի ուրիշ ծրար հանեց:

Պետունց Գալոն հայտագրը իշեցնելով զին-  
կոմի դեմքից, գցեց նրա ձեռքին: Աև շրջա-  
նակված այդ ծրարը խեղղող տիրությամբ  
համակեց նրա հոգին:

— Արամիս մասի՞ն ա, — դողաց նրա  
ձայնը, — էլ չկա՞ նա:

— Այս, — դանդաղ և հուզված խոսեց  
զինվորական կոմիսարը, — ընկել է հերոսի  
մահով:

— Արամս, — հազիվ արտասանեց Գալոն  
այդ հարազատ, աշխարհում ամենից սիրե-  
լի անունը:

Նրա աշքերի մեջ կոմիսարը արցունքի կա-  
թիլներ նկատեց:

Միսիթարական շատ խոսքեր լսելուց հետո,  
Պետունց Գալոն ուրքի կանգնեց ու թողեց  
զինվորական կոմիսարիատի շենքը:

Փոլոցում շոշափելով գրանում գտնվող  
որդուն գրած նամակը, որ էլ պետք չէր լի-  
նի ուղարկել, Սոսունց Սեղրակին գրած կոլ-  
տնտեսության նախագահ Եղորի նամակը,  
Պետունց Գալոն որոշեց փոստ շղնալ:

Մի քանի լուսե հետո նա մենակ քայ-  
լում էր շիշանացին կենտրոնից դեպի դյուլ  
տանող ճանապարհով:

Մի՞թե երբեք Պետունց Գալոն չպետք է  
հանդիսաւ անցներ այդ՝ ուրիշներին ճանձրա-  
լի, երկար թվացող ճանապարհը, ձորերը  
մտնելիս չպետք է լսեր թռչունների ու գե-  
տերի երդը, դաշտերում չպետք է տեսներ  
ծաղիկը, այդիներում՝ պողավորիած ծառերը:

## 8.

Դյուլ հասնելով, Գալոն անմիջապես դնաց  
հարեանուհու՝ Սաթոյի մոտ, որ հենց նոր

Եր վերադարձել դաշտային՝ աշխատանքից:

— Աչքդ լուս, Ալեքի աղջիկ, — տուն մըս-  
նելով ձայնեց նա, — մարդուցդ լավ խաբար  
եմ քերել:

— Վայ, — ուրախ ճշաց Սաթոն, — նա-  
մա՞կ կա:

— Հա, զինկոմն ա ստացել:

Ու Գալոն նրան մեկնեց շրջանից հետք բե-  
րած նամակը:

— Էս Հակոբի հրամանատարն ա գրել:  
Շուտով նա էլ կգրի:

Հետո նա հարեանուհուն պատմեց Հակո-  
բենց զորամասի մասին զինվորական կոմի-  
սարից լսածը:

— Շնորհակալ եմ, Գալո քեռի, շատ շնոր-  
հակալ եմ քեզնից, — արտասվախառն ձայ-  
նեց Սաթոն, — զինկոմից էլ եմ շնորհակալ:  
Բոլորիցդ շնորհակալ եմ: Բարով մի էսպիսի  
խաբար էլ Արամից գա, որ դու էլ ինձ ողես  
ուրախանա:

Պետունց Գալոն լուս լսում էր հարեանու-  
հուն:

Հետո նա հրաժեշտ տվեց Սաթոյին ու Հե-  
ռացավ նրա տնից:

Այդունուցից նա դեպի կոլտնտեսովթյան  
որասենյակը շարժվեց. նախագահին ան-  
պայման տեսնել էր ուղում:

Եգորը հենց այնտեղ էր, հաշվետարի հետ  
ինչ որ գործով զբաղված:

Գալոն լուռ նստեց նրանց կողքին:  
— Եկա՞ր, — առանց հայացքը սեղանի  
թղթերից հեռացնելու, հարցրեց Եգորը:  
— Հա, եկաւ  
— Գործերդ վելջացրի՞ր:

— Հա, Գևորգյան Հակոբից էր տեղեկու-  
թյուն ստացվել կոմիսարիատամ:

— Դրա համա՞ր էին քեզ կանչել, — նորից  
հարցրեց Եգորը:

Գալոն լուռ մնաց:

Նրա դեմքի մկանները խաղում էին, կծկը-  
լում:

Ինչ որ մի բան դեմ էր տռել կոկորդին և  
ասես Հիմա սկսոք է խեղդեր նրան:

Գրասենյակում կարծես սլակատամ էր  
օդը:

— Հա, դրա համար էին կանչել, — բառերը ծանրորեն դուքս հկան Պետոնց Գալոյի բերնից:

— Ուրա՞խ սեղեկություն բերիր:

— Հա:

Դարձյալ լսություն եղավ:

Կոլտնտեսության նախագահն ու Հաշուածարը լարված շարունակեցին իրենց աշխանքը:

— Սոսունց Սեպրակին զրած նամակը ետ եմ բերել, — Հանկարծ լսությունը խղեց Գալոն:

— Ինչո՞ւ, — զարմացավ Եղորը և Հայոցը կտրեց սեղանին փոած թղթերից:

— Դեռ մենք իրավունք չունենք գյուղի, կոլխոզի անունից նրան նամակ գրելու, — Հանգիստ խոսեց Գալոն, — մենք զեռ դրան արժանի չենք:

Մի ըուպե հետո խախտվեց Պետոնց Գալոյի հանգստությունը և նրա ձայնը երերաց.

— Էստեղ մարդիկ արցունով ին կովում դերմանացու հետ: Զէ, Եղոր ջան, մենք դեռ չենք հավասարվել նրանց: Ա'յ, երբ մեր աշ-

– խառնքի ձենու էլ գրոհաւ կհասնի, ինչպիս  
Սոսուց Սեղբակի գործի ձենն առ մեղ հա-  
սել, էն վախտը նոր միայն նամակ կգրենք  
նրան։ Հերոսին՝ հերոսությամբ պիտի պա-  
տասխանել, Եգոր ջան։

Գրադանից հանելով ուսեղանին դնելով կոլ-  
ոնուեսության նախադաշի գրած նամակը,  
Գալոն դանդաղ քայլելով դուրս եկավ դրա-  
սենյակից։

Եգորն ու հաշվետարը հարցական հայոց-  
քով ուղեկցեցին նրան։

Պետոնց Գալոն դանդաղ շարժվեց դեպի  
իր տունը։

Արևը վաղուց էր մայր մտել և խովարը  
ոկսել էր փուլել դաշտերի վրա։

Գալոն տիսուր քայլելով անցնում էր գյու-  
ղամիջով և նրան թվում էր, թե այդ խավա-  
րը իր սրտի վրա էլ է իջնում, իր հոգու, իր  
մտքի վրա։

Հասնելով տուն, նա անցավ ներս ու նըս-  
տեց առաջին հանդիպած աթոռին։

Խավարը խտանում, հա խտանում էր։

Սենյակում չէր երեսում ոչ մի իր։

Այդպես խավարեց և իր տան ճրագլութեանձրացած խավարի միջից Գալոն իր անթարթ հայացքը հառել էր դուրս և ինքն էլ շգիտեր, թե ո՞ւր էր նայում և ինչո՞ւ:

Ասես դատարկվել էր աշխարհը, շուրջը, իր հոգին ու սիրությունը ամեն ինչ անիմաստ էր դառել ու անբովանդակ:

Այդպես երկար մնաց նա նստած: Հետո ոտքի կանդնից և սենյակից դուրս եկավ:

Իր Արամը էլ շկար, նա երբեք չէր անցնելու այդ շիմքը, դյուզում երբեք չէր երեւալու նրա բարձր հասակը և հայրը երբեք չէր լսելու նրա քաղցր, դուրեկան ձայնը:

Կանգնած բակում Պետունց Գալոն լուս դիտում էր շուրջը:

Գյուղը կամաց-կամաց քնում էր: Մարում էին պատուհանների փեղկերից երեսով լույսերը:

Լոռամ էին ձայները. բոլորը հանդստանում են, որ վաղը նոր եռանդով շարունակեն աշխատանքը:

Բայց այս ո՞րտեղից է նրա ականջին

Հասնում խոսակցության բարձր ձայն, այս  
ի՞նչ երեխաներ են, որ Հիմա դեռ արթում են  
և ուժեղ ծիծաղում են:

Գալոն ականջ դրեց. ձայները իր հարե-  
վանուհու՝ Սաթոյի տնից էին գալիս:

Այո՛, այո՛, այդպես էլ սկսք է լիներ,  
այդ լավ է, շատ լավ է. Հետո Սաթոն ուզ-  
մաճակատում գոնվող ամուսնուց այսօր ու-  
րախ լուր էր ստացել:

Հիմա Սաթոն, նրա երեխաներն իրենց եր-  
շանիկ են զդում:

Եվ ինչքան ուժեղ էր վառվում հարևանու-  
հու տան ճրագը:

Գալոն շրջեց հայացքը և նորից դեպի սե-  
նյակը շարժվեց:

Շեմքում նա մի վայրկյան կանգ առավ:

Արցունքը խեղդում էր նրան:

Նա անցավ ներս:


Ինչքան խիտ էր խավարը սենյակում, ինչ-  
քան ծանր:

Նա շարժվեց դեպի սեղանը և առաջ քաշեց  
ճրագը:

Դողացող ձեռքով վառեց լուցկին ու մո-  
տեցրեց նրան:

Խույսի ուժեղ ալիքը փուլեց սենյակում:  
Թո՛ղ, թո՛ղ իր ճրադն էլ վառվի, թո՛ղ Սա-  
թոյի լուսավոր սենյակի կողքին երբեք խա-  
վար չինի, Երբեք շմարի ոչ մեկի ճրադը:

1947 թ.



Տեխ. լոմբադիր՝ Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

Վ.Յ. 03669 Պատվեր 428. Տիրած 4000: Տպ. 2<sup>1/8</sup> մ.  
հեղ. 1,1 մամուլ: Հանձնված է արտադրության  
3/IX 1947 թ., ստորագրված է տպադրության հա-  
մար 5/X թ.

---

ՀՍՍՌ Մինիստրների Առվետին կից Պալիգրաֆ. և  
Հրատարակչութ. վարչ. № 3 տպարան, Երևան, Ալա-  
վերդյան փ. 65:

the next month, and the first of January, 1863, he was appointed  
Major of Engineers, and assigned to the command of the  
new Fort Monroe, Virginia.

He remained at Fort Monroe until the fall of 1864, when he  
was promoted to the rank of Lieutenant-Colonel, and assigned  
to the command of the new fort at Petersburg, Virginia.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040999

ԳԻՒՐ 2 Ա.

Յ Յ

